# Կիսամյակը կարելի է արդյունավետ համարել

## Թեպետ բացահայտվել են որոշ խախտումներ

**Թամարա ՄՈՒՐԱԴՅԱՆ**

Ի՞նչ է արվել ու ի՞նչ է արձանագրվել. այս հարցերի պատասխանները հնչեցնելով՝ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն երեկ ամփոփեց 2011թ. առաջին կիսամյակի գործունեությունը:

Այսպես, այդ ժամանակահատվածում կատարելագործվել է իրավական դաշտը: ՀՀ կառավարության կողմից ընդունվել են «Հասարակական գիտությունների զարգացմանը նպաստող ծրագրին եւ ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին», նաեւ «ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2011-2015թթ. ռազմավարական ծրագրին եւ միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» որոշումները:

Սրանցից առաջինը, ըստ ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի նախագահ **Սամվել Հարությունյանի,** նպատակ ունի ապահովելու հասարակական գիտությունների բնագավառում իրականացվող հետազոտությունների մասնագիտական մակարդակի բարձրացումն ու համապատասխանեցումը հասարակության եւ տնտեսության արդի պահանջներին: Իսկ ահա երկրորդը միտված է ապահովելու գիտության ոլորտի հետագա զարգացումը՝ ՀՀ կառավարության, մասնավոր բիզնեսի, քաղաքացիական հասարակության, ինստիտուտների եւ սփյուռքի ջանքերի զուգակցմամբ:

Նույն նպատակով մեր հանրապետությունում հայտարարվել է գիտական ծրագրերի ֆինանսավորման մրցույթ, որի արդյունքում ֆինանսավորվել է շուրջ 130 գիտական ծրագիր: «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր-2010» մրցույթի շնորհիվ ֆինանսական միջոցներ է հատկացվել 32 գիտական ծրագրի: 5 ծրագիր էլ ֆինանսավորվել է «Արցախի գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր-2011» մրցույթի շրջանակում:

Ս. Հարությունյանը համոզված է, որ Արցախի գիտնականները պետք է ունենան նույն իրավունքները, որոնք ունեն այստեղի գիտնականները: Ուստի վերոնշյալ 5 ծրագրերի ֆինանսավորման 80 տոկոսը եղել է ՀՀ բյուջեից, 20 տոկոսը՝ Արցախի:

Ընդհանուր առմամբ 2011թ. ֆինանսավորման են երաշխավորվել շուրջ 200 գիտական ծրագրեր:

*«Սա բավականին լուրջ թիվ է»*,-կարծում է ԳՊԿ նախագահը: Զգալի թիվ են կազմում նաեւ այն պետությունները, որոնց հետ Հայաստանը պատրաստվում է բանակցություններ վարել «Քենդլ»-ի



իրականացման համար: Հարությունյանը հույս հայտնեց, որ մասնավորապես չինական կողմը հետաքրքրություն կցուցաբերի եւ գուցե համաֆինանսավորի:

Մինչ դրանում համոզվելը, այս տարվա ընթացքում Հայաստանում ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր ՀՀ եւ Իտալիայի «Eelettra» կենտրոնի ներկայացուցիչների միջեւ: Քննարկում է տեղի ունեցել Հայաստանում լույսի աղբյուրի հենքի վրա միջազգային կենտրոնի ստեղծման գիտատեխնիկական տեսանկյունների եւ միջազգային գիտական հանրության համար դրա հեռանկարների իրականացման վերաբերյալ: Այնուհետեւ ներկայացվել է «Քենդլ» նախագծի իրականացման առաջին փուլի՝ Գերմանիայի «Desy» կենտրոնի կողմից անհատույց տրված սարքավորումների հիման վրա «Areal» լազերային բարձր հաճախականային գիտահետազոտական գծային արագացուցչի կառուցման ընթացքը:

Վերջերս էլ ՀՀ վարչապետին ներկայացվեց «Քենդլ» նախագծի իրագործման 2011թ. գործողությունների ժամանակացույցը:

*«Քենդլը» ՀՀ կառավարության կողմից հայտարարվել է որպես պետական կարեւորագույն ծրագիր»*,-տեղեկացրեց գիտպետկոմի ղեկավարը՝ անդրադառնալով այս տարվա գործողությունների մյուս կետին՝ մոնիթորինգին: Ապրիլ-հունիս ամիսներին կոմիտեն մոնիթորինգ է անցկացրել բյուջեից բազային ֆինանսավորում ստացող 3 գիտական կազմակերպություններում 6 ծրագրի մասով. 4 ծրագիր ԵՊՀ-ում, 1-ական էլ ՀՀ ԿԳՆ բժշկակենսաբանական միջազգային հետբուհական ուսումնական կենտրոնում եւ ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանում: Դրա հետեւանքները, թերեւս, գոհացուցիչ չեն: Մոնիթորինգը բացահայտել է թե՛ իրավական, թե՛ ֆինանսական բնույթի խախտումներ: Խախտումները, Ս. Հարությունյանի հավաստմամբ, շտկելի էին, հետեւաբար պատասխանատուները պատժի չեն ենթարկվել: Նրանց պարզապես տրվել են համապատասխան հանձնարարականներ, որոնք պետք է իրականացնեն 2-3 ամսվա ընթացքում եւ հանդես գան հաշվետվությամբ: